

S. Ս. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐՏՈՅԻԼԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԹԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ներկա հաղորդումը վերաբերվում է վերջին երեք տարվա ընթացքում կարտոֆիլի վերաբերյալ մեր կատարած փորձնական աշխատանքների մի քանի տվյալներին, որոնք ստացվել են Խ. Արուվյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ադրոբիոկայանում:

Ներկայումս մեր ռեսպուբլիկայի քաղաքամերձ տնտեսությունները առանձնակի նշանակություն են ստանում: Սրանք պետք է բավարարեն քաղաքների արագ աճող բնակչության պահանջմունքները նաև կարտոֆիլով:

Ռեսպուբլիկայի բամբակացան շրջաններում, որտեղ կլիմայական պայմանները բարենպաստ են, հնարավոր է նույն տարում ստանալ տարրեր կուլտուրաների երկու լիարժեք բերք: Առաջին բերքը հնարավոր է ստանալ հուլիսի առաջին տասնօրյակում, իսկ երկրորդը՝ նոյեմբերի կեսերին:

Բամբակացան շրջանների աշխատավորությունը դեռ շատ վաղուց ծանոթ է ամառացան կուլտուրաների մշակությանը: Աշնանացան ցորենը հնձելուց հետո խոզանատեղը վարվում և ցանվում է համեմատաբար կարճ վեգետացիա ունեցող թանկարժեք բույսերով (լոբի, եգիպտացորեն, կորեկ, վարունդ, ձմերուկ, սեխ, ճակնդեղ և այլն):

Նույն հաջողությամբ կարող է մշակվել նաև կարտոֆիլը:

Պետք է նշել, որ Նրեանի քաղաքամերձ տնտեսությունները կարող են կարտոֆիլի առատ բերք ստանալ, եթե ցանքը կատարեն վաղ դարձանը: Այդ երեք վում է աղյուսակ 1-ում բերված տվյալներից:

Աղյուսակ 1

Կարտոֆիլի ցանքի ժամկետների ադդեցությունը բերքատվության վրա

Սորտերի անունը	Ցանքի ժամանակը	Բերքահավաքի ժամանակը	Բերքի քանակը մեկ հեկտարից (ցենտ.)	Օսլայի %
Լոբի	5/3	20/6	90	15,6
Լոբի	15/4	20/7	65	13,2
Էպրոն	5/3	20/6	70	14,3
Էպրոն	15/4	20/7	45	12,6

Այս աղյուսակից երևում է, որ կարտոֆիլի վաղ ժամկետի ցանքը համեմատաբար ավելի շատ բերք է տալիս, քան ուշ ցանքը: Անհրաժեշտ է նշել նաև այն, որ միջահաս Լոբի սորտի բերքատվությունը շատ ավելի բարձր է, քան վաղահաս Էպրոն սորտինը, ուստի և պարզ է, թե նրանցից որը պետք է մշակվի:

Մեր դիտողությունները ցույց են տվել, որ հունիս և հուլիս ամիսներին վաղահաս Էպրոնի փրերը երկար ժամանակ փարթամորեն աճում են և համե

մատարար ավելի դանդաղ անցնում պալարների առաջացման ու բերքակուտակման, քան միջահաս լորխ սորտի փրերը:

Կարտոֆիլի բերքատվության վրա, ինչպես հայտնի է, սերմացու պալարի լուսակոփումը դրական ազդեցություն է թողնում: Մենք փորձեցինք պարզել, թե մեր պայմաններում տարբեր կշիռ ունեցող պալարների ցանքից ինչպիսի՞ արդյունք է ստացվում: Ստացված տվյալները բերված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Պալարների կշռի ազդեցությունը բերքատվության վրա

Սորտ	Սերմացու պալարների կշիռը գ-ով			Ծանոթություն
	35	50	70	
Լորխ՝ մեկ հեկտարից (ցենտ.)	62	89	96	Բերքահավաքը՝ հուլիսի 18-ին
Էպրոն մեկ հեկտարից (ցենտ.)	46	53	54	

Աղյուսակը ցույց է տալիս, որ կարտոֆիլի համեմատաբար խոշոր պալարները (լորխի դեպքում՝ 62—96 գ և էպրոնի՝ 46—54 գ սահմաններում) ավելի բարձր բերք են տալիս, քան մանր պալարները:

Մենք ձգտեցինք նույն սորտերի նկատմամբ որոշ տվյալներ ստանալ նաև սերմացու պալարների լուսակոփման ազդեցության վերաբերյալ՝ բերքատվության տեսակետից: Ստացված տվյալները ներկայացված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Լուսակոփման ազդեցությունը սերմացու պալարի բերքատվության վրա

Սորտի անունը	Փորձի վարիանտը	Բերքահավաքի մամկետը	Բերքը մեկ հեկտարից (ցենտ.)
Լորխ	լուսակոփված	15/7	95
Լորխ	առանց լուսակոփման	15/7	73
Էպրոն	լուսակոփված	15/7	56
Էպրոն	առանց լուսակոփման	15/7	44

Փորձնական այս տվյալները ցույց են տալիս, որ սերմացու պալարների լուսակոփումը դրական ազդեցություն է թողնում բարձր բերք ստանալու վրա: Բացի այդ, կարտոֆիլի պալարները լուսակոփման ենթարկվելով, առաջացնում են փարթամ ծիլեր, որոնք լավ աճ են հանդես բերում և համեմատաբար ավելի քիչ են հիվանդանում դանդաղան սնկային ու բակտերիալ հիվանդություններով:

Կարտոֆիլի բերքատվության վրա որոշակի ազդեցություն ունի ցանվող պալարի ձևը և յարավիզացումը (տե՛ս աղ. աղ. 4 և 5):

Բերված փորձնական տվյալները ցույց են տալիս, որ նորմալ ձևավորված պալարներն ավելի շատ բերք են տալիս, քան ալյանդակված պալարները: Անհրաժեշտ է նշել, որ ալյանդակված պալարները ոչ միայն պակաս բերք են

տալիս, այլև ստացված բերքի շուրջ 35—45% -ի սահմաններում պալարները լինում են համեմատաբար մանր ու այլանդակված:

Աղյուսակ 4

Կարտոֆիլի պալարի ձևի ազդեցությունը բերքատվության վրա (հեկտ. ցենտ.)

Սորեր	Բերքահավաքի մասկետը	Նորմալ ձևի պա- լարներ մեկ հեկ- տարից (ցենտ.)	Այլանդակված պա- լարներ մեկ հեկ- տարից (ցենտ.)	Տանձաձև պալար- ներ մեկ հեկտարից (ցենտ.)
Լորի	15/7	94	81	52
Էպրոն	15/7	62	56	50

Աղյուսակ 5

Կարտոֆիլի պալարի յարովիզացիայի ազդեցությունը բերքատվության վրա (հեկտ. ցենտ.)

Սոր	Ցանված սերմացուն	Բերքը մեկ հեկտարից (ցենտ.)		
		հունիսի 15	հունիսի 1	հունիսի 20
Լորի	Յարովիզացիայի ենթարկ- ված՝ բաց օդում, արևի տակ	56	63	76
	Յարովիզացիայի ենթարկ- ված՝ լուսավոր շենքում	60	68	80
	Ծլեցում 20×20 սմ փոսի մեջ	65	74	87
	Յարովիզացիայի չենթարկ- ված	42	49	64

Աղյուսակ 5-ի տվյալները ցույց են տալիս, որ կարտոֆիլի յարովիզաց-
ված պալարներն ավելի շատ բերք են տալիս, քան չյարովիզացվածները,
բայց 20×20 սմ փոսերի մեջ ծլեցրած պալարներն ավելի շատ բերք են տա-
լիս, քան յարովիզացված պալարները: Այդ հանգամանքը մենք բացատրում
ենք նրանով, որ յարովիզացված պալարների կանաչած ծիլերը հողից համե-
մատաբար ավելի ուշ են դուրս գալիս, քան փոսի մեջ ծլած եթիոլացած, բայց
նախօրոք արմատակալած ծիլերը: Կարևոր է նշել և այն, որ փոսերում սեր-
մացու կարտոֆիլի ծլեցումը հնարավոր է կատարել բաց դաշտում փետրվարի
առաջին տասնօրյակում, որ մեծ ծախսերի հետ կապված չէ:

Արարատյան դաշտավայրի պայմաններում սերմացու կարտոֆիլը պետք
է տնկել մարտի սկզբներին 12—15 սմ խորությամբ և համեմատաբար ավելի
խիտ (55—60 սմ), քառակուսի բնացան՝ յուրաքանչյուր բնում տնկելով երկու
պալար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ երբ Արարատյան դաշտավայրի
պայմաններում վաղ դարնանը (մարտի սկզբից) յարովիզացված պալարնե-
րով կարտոֆիլի ցանք է կատարվում նույնիսկ սահմանափակ հողատարածու-
թյունների վրա, ապա հնարավորություն է ստեղծվում բերքը շուկա հանել հու-
նիսի 20-ից և ապահովել Նրևանի ու քաղաքամերձ կոլտնտեսությունների
բնակչությանը թարմ կարտոֆիլով մինչև հուլիսի վերջերը, որից հետո սկսվում
է վաճառքի հանվել ռեսպուբլիկայի նախալիսնային և լեռնային շրջաններից
ստացվող նոր բերքը:

Մեր փորձերի տվյալները թույլ են տալիս դալ այն հզրակացության, որ Արարատյան դաշտավայրի պայմաններում վաղ գարնան ցանքի համար պետք է օգտագործել միայն բերքառատ լորխ սորտը և ոչ թե մեր կողմից նշված կարտոֆիլի վաղահաս սորտերը:

Արարատյան դաշտավայրում կարտոֆիլի զրադեցրած հողատարածությունները կարտոֆիլի բերքահավաքից հետո, որը տեղի է ունենում հունիսի վերջին կամ հուլիսի սկզբներին, միանգամայն հնարավոր է օգտագործել այլ կուլտուրաների մշակության համար՝ եղիպտացորեն, ճակնդեղ, լոբի, դդմիկ, բանջարային կուլտուրաներ և այլն և ստանալ երկրորդ լիարժեք բերք:

Արարատյան դաշտավայրի համար կարտոֆիլի սերմացու պետք է բերել միայն լեռնային շրջաններից (Սևանի ավազանից, օգտվելով երկաթուղու ստեղծած հարմարություններից): Մեր բազմաթիվ փորձերը հաստատել են, որ լեռնային պայմաններում աճեցված կարտոֆիլի պլանտները Արարատյան դաշտավայրում վաղ գարնանը ցանվելով՝ տալիս են բարձր բերք:

Կարտոֆիլի վաղ գարնան մշակությունը բամբակացան շրջաններում ու քաղաքամերձ կուլտեստություններում առանձին ծախսեր չի պահանջում, տնտեսապես կարող է արդարացնել իրեն, լրացուցիչ եկամտի աղբյուր դառնալ տնտեսության համար և տալ նաև 25—35 տոննա կանաչ զանգված՝ սիլոսի համար:

Խ. Արսվյանի աշխատանք

Մանկավարժական ինստիտուտի

Գենսարանական ֆակուլտետ

Ստացվել է 22.V 1962 թ.

Т. С. ТЕР-СААКЯН

ИЗУЧЕНИЕ НЕКОТОРЫХ БИОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ КУЛЬТУРЫ КАРТОФЕЛЯ В УСЛОВИЯХ АРАРАТСКОЙ РАВНИНЫ

Р е з ю м е

Наши исследования показали, что в условиях Араратской равнины картофельные растения из-за высоких температур подвергаются глубоким биологическим изменениям.

Возделываемый в северных областях Союза позднеспелый сорт картофеля Лорх в условиях хлопкосеющих районов Армянской ССР приобретает свойство «раннеспелости», а скороспелые сорта Эпрон, Курьер и другие при возделывании в условиях Араратской равнины становятся «позднеспелыми».

Выявление этих свойств сорта Лорх дает большие возможности создания в природных хозяйствах Еревана и ближайших хлопкосеющих районах республики условия для выращивания этого сорта, возделываемый ныне на больших площадях в горных районах как среднеспелый сорт. Таким образом в районах Араратской равнины ранней весной можно использовать сорт Лорх в качестве посевного материала, взамен известных раннеспелых сортов, как-то: Эпрон, Курьер, Эпикур, Варба и т. д.

Многолетние наши исследования показали, что в Араратской равнине, в частности, в условиях пригородных хозяйств Еревана, посадку картофеля надо производить рано, в первой декаде марта. При таких сроках посадки урожайность картофеля сорта Лорх достигает до 90 цент. с га при уборке его 10—20 июня. Этот срок уборки дает возможность сбора и силосования ботвы по 25—35 тонн с одного га.

При поздней посадке (1—5 апреля) урожайность картофеля падает.

Среднеспелый сорт Лорх при посадке рано весной в хлопкосоющих районах дает возможность получать два полноценных урожая в год с одного участка земли.

Исследования показали, что проращивание клубней картофеля в траншеях намного сокращает вегетационный период растений и дает возможность получать высокие показатели урожайности. Выяснены также влияния величин и форм посадочных клубней на урожайность.

Необходимо отметить, что участок, освобожденный из-под картофеля 20 июня, можно использовать вторично под такие культуры, как: кукуруза, сахарная свекла, бобовые и другие с получением их полноценных урожаев.

Для пригородных хозяйств Еревана и для хлопкосоющих районов республики рекомендуется ежегодно рано весной завозить здоровый семенной картофель сорта Лорх, выращенный в горных районах республики, в том числе и в районах Севанского бассейна (Камо, Мартуни, Раздан, Севан, Красносельск) и другие.